Ж. ХАЧАТРЯН, О. НЕВЕРОВ. Архивы столицы древней Армении Арташата, Ереван. Изд-во “Гитутюн” НАН РА, 2008, 271 с., 96 табл.

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ հրապարակված գրախոսվող աշխատանքը Ժ. Խաչատրյանի և Օ. Նևերովի տարիների տքնաջան պրպտումների արգասիքն է:

Բովանդակային առումով հետազոտությունը բաղկացած է ներածությունից (5-6 էջ), 3 գլուխներից (7-130, Ժ. Խաչատրյան և Օ. Նևերով), հատկանշական ցուցակից (էջ 134-233), ընդարձակ մատենագիտությունից (էջ 252-261), աշխարհագրական անունների (էջ 265-268), կրճատումների ցանկերից (էջ 269) և հայերեն (234-244) ու անգլերեն (էջ 245-251) ամփոփումներից:

Հակիրճ ներածականում Խաչատրյանը կնքադրոշմների հարուստ հավաքածուն ներկայացնում է անտիկ ժամանակաշրջանի ընդարձակ միջավայրում՝ մ. թ. ա. 189-188 թթ., հիմնադրված, Արևելքն Արևմուտքին կապող և միջազգային ասպարեզում աշխույժ կյանքի կոչված Հայաստանի մայրաքաղաք Արտաշատի գործուն մասնակցության ֆոնի վրա: Մինչ կնքադրոշմների հայտնաբերումը, Արտաշատի պատմության, սոցիալ-տնտեսական ու մշակութային կյանքի մեկնաբանման հիմնական ատաղձը տեղում բացված շինությունների ճարտարապետությունը, խեցեղենը, մետաղը, զարդերը, դրամներն ու արվեստի գործերն էին: 8000 կնքադրոշմներից բաղկացած արխիվի գյուտով հայագետներին տրամադրվեց հետազոտության մի նոր զինանոց՝ քաղաքական կնճռոտ խնդիրների լուծումներն իմաստավորելու և պատմության մութ կետերը նորովի լուսաբանելու համար: Նախնական վիճակի հստակությունից զուրկ լինելու պատճառով, 8000 կնքադրոշմներից վերծանված են 6000-ը, որոնց թեմատիկ ժանրերն անկախ գեղարվեստական ու ոճական ուղղությունների տարբերակման, համապարփակ քննության է ենթարկված մ. թ. ա. II–I դդ. Հայաստանի քաղաքական կյանքում տեղի ունեցած բարդ իրադարձությունների շրջանակում:

Ներածությանը հաջորդող բաժիններում Ժ. Խաչատրյանը անդրադառնում է 1979-84 թթ. աշխատանքների ընթացքում արշավախմբի կողմից պայմանականորեն ընդունված V և VIII բլուրների տարածքում կնքադրոշմների հայտնաբերման հանգամանքներին:

Քաղաքի հիմնադրման ժամանակ նախօրոք մշակված հատակագծով պաշտպանական որոշակի համակարգով, ջրամատակարարման և ջրահեռացման որոշակի ծրագրով V բլրում կառուցված համալիրը, նյութերով հանդերձ, Ժ. Խաչատրյանի կողմից մանրախույզ քննության է արժանացել: Ուսումնասիրվող գտածոները կարելի էր ներկայացնել կոնկրետ հայտնաբերման միջավայրում, ինչպես, օրինակ, V բլրի համալիրներից մեկի մեծ սենյակի II հատակից (քաղաքի հիմնադրման ժամանակներին համահունչ) կնքադրոշմների հետ Անտոքիոս I-ի և Տիգրան II-ի դրամների գյուտը տրամաբանորեն կբավարարեր նյութի ժամանակագրական պատկերն ընկալելու համար: Պեղումների ընթացքում քաղաքային բարձր մշակույթով օժտված 14 սենյակից բաղկացած շինության սահմաններում 20 կնքադրոշմների գյուտը համաժամանակյա արձանիկների ընդհանուր կոմպլեքսում նույնպես կհստակեցներ բուն նյութի շրջանառության պատկերը մ. թ. ա. I դ.: Ավելացնենք, որ նյութի դյուրընկալման համար նպատակահարմար կլիներ կնքադրոշմների հայտնաբերման կոնկրետ ցուցիչին ավելացնել ճարտարապետական սխեմատիկ մի գծագիր:

Աշխատության առանցքային ու փաստառատ բաժիններից մեկը վերնագրված է «Արտաշատի կնքադրոշմներն իբրև պատ-

մության աղբյուր», ուր Խաչատրյանը մանրամասնել է մ. թ. ա. I հազարամյակից այդ երևույթի ծագումը, գործառույթը, փուլ առ փուլ նշել Հայաստան մուտք գործած բոլոր արժեքները, ի վերջո, կենտրոնանալով Արտաշատի արխիվների հանգամանալից քննության վրա: Վերջիններս ստուգաբանված են իմաստաբանական, խորհրդանշային և պատմական բարեխիղճ հիմունքներով (թեև գանձի առատությունը նորմավորման ընթացքում տեղիք է տվել ժամանակագրական ու թեմատիկ որոշ շեղումների): Այս հատվածի շարադրանքը կառուցված է դասակարգման ծագումնային, ժամանակագրական ու արվեստագիտական դպրոցների տարբերակման հատկանիշներով: Չափազանց առատ նյութի սպառման ձգտումով, Խաչատրյանը խմբավորումներն իրականացրել է տվյալ երկրի իրավական վիճակի, մարդկանց զբաղմունքի, մշակութային առանձնահատկությունների և գործառության պայմանների հաշվառումով, ընթացքում ձևակերպելով համապատասխան մեկնաբանություններ: Կնքադրոշմների ուսումնասիրության ընդունված ավանդական մեթոդի կիրառմամբ, Խաչատրյանը հստակորեն ցույց է տվել նաև II–I դարերում տվյալ ռեգիոնում գործող գլխավոր ուժերի միտումներն ու բնութագրական գծերը, իր շահերից բխող միջազգային հարաբերությունների մեջ յուրաքանչյուր երկրի օբյեկտիվ պատմական դերն ու դիվանագիտական խաղերը, ժողովուրդների (հռոմեացիք, պարթևներ, հույներ, հայեր) շփումներն ու փոխազդեցությունները՝ դրանով իսկ վեր հանելով նյութի ժամանակագրական, պատմական, մշակութային քննությունը: Ուսումնասիրության մասնաբաժիններից մեկը կառուցված է արձանագրություններ բովանդակող կնքադրոշմների վերլուծությամբ: Պատմական ժամանակաշրջանի լեզվամտածողության օրինաչափության սահմաններում ընդունված արամեատառ ու հունատառ հիշատակագրություններով, երբեմն էլ պատկերատիպերով ուղեկցված կնքադրոշմները, առանձին ուշադրության են արժանացել: Այդ օրինակներից մեկը հանրահռչակ Արտեմիսին բնորոշ դասական "A" "Є" (էջ 42) մոնոգրամայով և մեղվի խորհրդանիշով կնքադրոշմն է, որի ծագումը Խաչատրյանը վերագրում է Եփեսոսին, ուր լայնորեն ընդունված էր այդ աստվածուհու պաշտամունքը՝ իրողությունը հիմնավորելով Արտաշատի և Եփեսոսի առևտրամշակութային հարաբերությունների ուղղակի կապով:

Ժ. Խաչատրյանի տեսադաշտից չեն վրիպել և արամեատառ լեզվամիավորներով կնքադրոշմները (էջ 43): Այդ համատեքստում հավաստի քննարկումների է արժանացել իրանական ծագումով կնքադրոշմների խումբը, ուր պահլավերեն արձանագրությունների քննությունը գիտական էթիկայի կանոններով ստուգաբանված է հանրահռչակ լեզվաբան Վ. Լիվշիցի հիմնավոր դիտողություններով (էջ 44): Աշխատությունում առանձին ուշադրության է արժանացել գերիների երթի կոմպոզիցիոն տեսարանով հարդարված կնքադրոշմը, որն աղերսվում է Բեհիստունյան ժայռապատկերների թեմատիկային (III–92): Ժ. Խաչատրյանը վերլուծությունը սոսկ փաստով չի արձանագրել, այլ հավելյալ վկայություններով թափանցել է երևույթի խորքը՝ տալով իր գնահատականը ստրկավաճառության վերաբերյալ, որը ժամանակաշրջանի բնորոշ զբաղմունքներից մեկն էր: Արքայական որսի տեսարանով կնքադրոշմների քննարկումը ուսումնասիրության մեջ իրականացված է ժամանակի կանոնների ու սահմանված արարողությունների չափորոշիչներով կամ իրողության պաշտամունքային գործոնների էության հաշվառումով (III–1001-101): Հայտնի է, որ Անտոնիոսի և Օգոստոսի միջև քաղաքացիական կռիվների (II–I դդ.) շարժիչ ուժն Արևելքն էր՝ հանձին Պարթևական Պարսկաստանի, որին տիրելու նպատակով երկու գահակալների ուշադրության առանցքը՝ Արտաշատը նվաճելու մոտիվն էր, հանգամանք, որ քաղաքը ներքաշեց դինաստիական այդ պայքարի մարտադաշտ: Արտաշատի արխիվում երկու գահակալների մրցակցությունն իր թեմատիկ տարբերակներով արտացոլված է Օգոստոսի, Կլեոպատրայի և Անտոնիոսի սյուժետային ու խորհրդանշային դիմերեսներով հարդարված կնքադրոշմների առատ պատկերաշարքով: Կնքադրոշմներից շատերը Օգոստոսի անձը բնութագրող դիմերեսն է, հաճախ այծեղջյուրի խորհրդանիշով (VII – 502-503), (VIII – 860, 861, 863): Իսկ Անտոնիոսը պատկերված էր Հերակլի [(I–27, IV– 293 (7 օրինակով), IV–300, 301a, 302a)], Դիոնիսին (II–65-69-71) և Հելիոսին նվիրված պատկերագրության մանրամասներով (VII–509-521):

Թեմատիկ նորարարությամբ ու պատմական կարևորությամբ առանձնակի արժեք ունեն Արտաշես II դիմապատկերով, հարակից մոնոգրամներով ու հունատառ արձանագրությամբ հարդարված կնքադրոշմները (X–1034, էջ 42-43): Հռոմեական աղբյուրների կցկտուր տեղեկություններով Արտաշես II-ի կյանքի մինչև օրս շրջանառու հայ ժողովրդի պատմության կնճռոտ պատմափուլը (մ. թ. ա. 30-20 թթ.) այս գյուտով արժանի է պատմագիտական ու արվեստագիտական նոր մեկնաբանությունների, ըստ որում Խաչատրյանը կնքադրոշմներից մեկի վրա միապետի գլխին թագի բացակայությունը բացատրում է նրա տակավին թագաժառանգ լինելու (X–1034) հանգամանքով: Ժամանակի քաղաքական հզոր գործիչներից Կլեոպատրան Արտաշատի կնքադրոշմների գանձում ներկայացված է բազում դրսևորումներով: Նրա դիմապատկերը հաճախ ընդօրինակված է համաժամանակյա դրամների պատկերագրությամբ (IX–953-954), աստվածների ուղեկցությամբ (I–39,40,41), Աֆրոդիտեի կերպարանքով, հաճախ Էրոսն ուսին (I–2, 313 օրինակ), Հերակլի ընկերակցությամբ (IV–258, 249, 259) և շատ այլ պատկերատիպով: Հետաքրքիր է նաև Անտոնիոսի և Կլեոպատրայի դստեր՝ Սելենայի դիմապատկերով կնքադրոշմը (I–43): Արտաշատի արխիվում Օգոստոսի, Անտոնիոսի, Կլեոպատրայի դիմապատկերներով և նրանց խորհրդանիշներով կնքադրոշմների առատությունը համոզիչ կովան են ուշադրությունը բևեռելու II– I դդ. թեժ պայքարի ընթացքում Հայաստանի ունեցած դերակատարությունն ըմբռնելու համար:

Արտաշատի արխիվը հարուստ նյութեր է պարունակում նաև քաղաքի առևտրական հանգուցակետի իրողությունը արձանագրելիս: Գրքում այդ զբաղմունքը առանձնացված է խորհրդանիշների մի ամբողջ համախմբով. ամֆորաները (IV–440-441, 442-443, 445, 447, 448), դելֆինները (VI–488-449, VII–732, 736, 737), խարիսխը (IX–920, 82 օրինակ) և դիոսկուրները (VI–488-449) խորհրդանշել են ծովային առևտուրը, մինչդեռ տարբեր ձևափոխություններով խաղողի վազը (VI–482, 484, 488- 96 օրինակ) հանդիսացել է ցամաքային առևտրի չափորոշիչը:

Արտաշատի կնքադրոշմների սիմվոլների շարքը կարելի է հասցնել հարյուրների, որովհետև կան և իրատեսական ու երևակայական թռչունների (VII–698, 701, 703, 707-710), կենդանիների, բույսերի բազում այլ պատկերներով հարդարված կնքադրոշմներ, որոնք կապված են մարդու զբաղմունքի, առօրյա կենցաղի, ապրելակերպի, զվարճալիքների և այլ հասկացությունների հետ: Սա լուրջ թեմաներից է, որ անտիկ շրջանի մշակութային խնդիրներով զբաղվողների առաջիկա հետազոտության նյութ կարող է ծառայել: Որոշակի կովաններից ելնելով (էջ 99) Խաչատրյանը արխիվը համարում է մասնավոր և եզրակացնում, թե այն լրացնում է Արմավիրի V–IVդդ. և Դվինի կնքադրոշմների (V–VII դդ.) միջև ընկած սպիտակ վանդակը:

Արտաշատի արխիվի քննարկումը արվեստագետ Օ. Ներսոն իրականացրել է հռոմեական դասական մշակույթի խոր իմացությունների, պատմական մտածողության օրինաչափության և քաղաքական կոնկրետ իրողությունների բարձրորակ մեկնաբանությամբ:

Համատեղելով մտածողության գիտական ու գեղարվեստական որակները, Օ. Ներսոնը ընտրել է Արտաշատի արխիվի լուսաբանման բովանդակային ու կառուցվածքային սինկրետիկ համակարգման իր ոճը: Այս համատեքստում կնքադրոշմներն ուսումնասիրվել են անկում ապրող հելլենիստական աշխարհի և նոր զարգացող Հռոմի քաղաքական խմբավորումների բախումների, Արևելք-Արևմուտք աշխարհների սուր հակասությունների ֆոնի վրա: Հիմք ընդունելով ժամանակի գլոբալ խառնարանի այս փոփոխությունները՝ նա տեսական քննարկումներն ուղեկցել է փաստագրական նյութի (կնքադրոշմների) ծավալուն ընտրանքով ու առարկայական չափորոշիչներով հիմնավորել հելլենիստական պատկերացումների աստիճանական անհետացման ու նոր արժեքների (ուշ անտիկ, հռոմեական) ծագման ու տարածելիության սահմաններն ու չափանիշները:

Գրքի այս բաժնում կնքադրոշմների քննությունն իրականացվել է հետևյալ փորձով. ա) բացահայտել արխիվի իրավական էությունը՝ անհատական թե պետական նշանակությունը, բ) ներկայացնել կնքադրոշմների թափանցման աշխարհագրությունը, գ) լուծել նյութի թվագրության խնդիրը: Ներսոնը 8000 կնքադրոշմներից 114-ի վրա է նկատել բովանդակային իմաստով կրկնակներ,

ըստ որում 4-ն ունեցել են 4-ական կրկնակներ, 42-ը՝ 3-ական, իսկ 68-ը՝ 2-ական: Այս հաշվարկի ընդհանուր հայտարարից նա բխեցրել է իր եզրակացությունը, թե Արտաշատի արխիվի փաստաթղթերն ու գործարքներն իրականացվել են առանց վկաների, ավելացնելով, որ բոլոր կնքադրոշմներն օտարամուտ են: Այս մտածողությանը դժվար է համաձայնել այն պատճառով, որ եթե ոչ բոլոր, ապա կնքված փաստաթղթերի կնքումն ու գործարքների զգալի մասն իրականացվել է տեղական պաշտոնյայի իրավասությամբ ու մասնակցությամբ, մանավանդ իր իսկ նյութի խմբավորումներից դատելով, հայկական կնիքները մի ստվար խումբ են կազմում (էջ 117-118):

Արխիվի շրջանառության հստակեցումը Ներովն իրականացրել է Սառնակունքի (Սիսիան) դրամական գանձի համեմատությամբ՝ դադարեցման ժամկետ ընդունելով 31-27 թթ. մ.թ.ա.:

Գալով աշխարհագրական սահմանների նորմավորման խնդրին, հեղինակը ուսումնասիրվող նյութը հետևյալ երկրների խմբավորումներով է ներկայացնում. I) Հռոմ-Իտալիա, ուր զգալի տոկոս են կազմել Մարկ Անտոնիոսի քարոզչությանը նվիրված կնքադրոշմները՝ 78, II) եգիպտական կնքադրոշմների խումբը, Կլեոպատրայի անձին պատկանող կոմպոզիցիոն պատկերներով ու խորհրդանիշներով՝ 45, III) Հայաստանի կնքադրոշմների խումբ՝ 35, IV) իրանական կնքադրոշմների խումբ՝ 35, V) Փոքր Ասիային վերագրվող խումբ՝ 30. VI) Միջագետքի և Սիրիայի խումբ՝ 10, VII) Բոսֆոր և Հյուսիս Սևծովյան խումբ՝ 10:

Արտաշատի գանձում լատիներեն արձանագրություններով կնքադրոշմներ չկան, և այս բացը Ներովը լրացրել է հռոմեական դիմապատկերների հայտնի շարքի խորագույն քննության սկզբունքով: Դիմերեսների նկարչական ոճի, բովանդակության, արվեստագիտական սխեմատիկ նորմատիվների ու ժամանակակից դրամների հետ ունեցած զուգահեռներով, նա պատճառաբանում է կնքադրոշմների ծագման բուն հռոմեական ակունքները: Տեքստում մանրամասնորեն զատորոշված են ավելորդ պաճուճանքներից (աքսեսուար) զուրկ հռոմեականները, որոնք փոխարինելու եկան ճոխ հարդարանքով հայտնի հելլենիստականներին: Արվեստագիտական հմուտ վերլուծություններով նա լիարժեք բնութագրումներ է հատկացրել Գնեյ Պոմպեոսի և նրա որդու՝ Սեկստի դիմապատկերներին (I–34), բացահայտել Մարկ Անտոնիոսի դիմապատկերը (I–27, I–3)՝ նրա զբաղեցրած դիրքին և կոչմանը համապատասխան: Նյութի ճոխությամբ հայտնի (էջ 110) Օգոստոսի դիմապատկերային պատկերաշարը նա շարադրել է պատմական իրողությունների ամբողջական կոնտեքստում, իսկ Օկտավիայի դիմապատկերի մանրամասներում (I–44-53, նա Մարկ Անտոնիոսի կինն էր), խտացրել է հռոմեական բարձրաշխարհիկ կնոջ արդուզարդը, մազերի հարդարանքը և այլ մանրամասների շեշտադրումները: Ներովի ուշադրությանն են արժանացել նաև պատմական այդ փուլում պաշտոնական իշխանավորների ինքնությունը կամ կոչումը հաստատող խորհրդանիշները, հաճախ զուգահեռ ունենալով ժամանակակից դրամները: Այդ տրամաբանությամբ, նա իբրև ծովակալ Սեկտ Պոմպեոսին ներկայացնելու ուղենիշ է ընտրել ծովերի աստված Պոսեյդոնի պատկերատիպով նրան ներկայացնելու միտումը (IV–226-229):

Ներովը իշխանավորի կամ զորավարի ինքնությունը հաճախ մեկնաբանել է դիմելով կենդանական աշխարհի (օձ, արծիվ, ցուլ) պատկերներով ընդունված խորհրդանիշներին (էջ 112):

Կնքադրոշմների ուսումնասիրության մեջ առանցքային են հայկական կնքագիտության վերաբերյալ Ներովի լուրջ եզրահանգումները: Հետազոտությունն իրականացված է քաղաքական իրադարձություններով հարուստ բարդ ժամանակաշրջանի (30-20 թթ. մ. թ. ա.) շրջանակներում: Չբացառելով աքեմենյան, հելլենիստական, սելևկյան ավանդույթների զորեղ ազդեցությունը հայկական մշակութային կյանքի բոլոր ոլորտներում՝ Ներովն առանձնացրել է բուն հայկական ապակե բազմանիստ և քարե կլոր կնիքները, հրամցնելով իրատեսական ու երևակայական կենդանիների, արշավող ձիավորների ու այլ պատկերներով հարդարված կնքադրոշմների մի ամբողջ շարք (III–106, 124, IV–363a, VII–658, 847, 860, IX–904, 905, 917):

Կնքադրոշմների վրա Արտաշես II-ի իշխանության անցնելու աստիճանական փուլերի կոմպոզիցիոն տարբեր դրսևորումները

Օ. Ներովն ամփոփել է պաշտոնական թեմայի սահմաններում: Ըստ հեղինակի՝ Արտաշես II-ին պատկերող կնքադրոշմներից մեկի վրա (I–8) նա գորավարի տեսքով է և կամքի մեծ ուժ արտահայտող դիմագծերին ուղեկցում է ART[A]ξαξ Արտաշես մոնոգրաման: Պատկերաշարքի մեկ այլ դիմանկարում (I–17) արքան պատկերված է պարթևների կողմից թագադրության արարողակարգի պահին: Թեմատիկ շարքը շարունակելով (III–128,131, 154), նա պարզաբանում է Արտաշես II-ի պարթևական կողմնորոշման հաստատակամությունը: Պաշտոնական բնույթի այս կոմպոզիցիոն պատկերաշարքի հետազոտությունն ավելի կշահեր, եթե 1985 թ. Արտաշատի պեղումներից հայտնաբերված Արտաշես II-ի դիմանկարով պղնձե երկու դրամների տիպաբանական վերլուծություններն ամփոփվեին շարադրանքում՝ նս մեկ անգամ հաստատելով Արտաշես II-ի պարթևական կողմնորոշումը և թշնամանքը հունա-հռոմեական ենթակայության դեմ[1]: Հունա-պարսկական կնքագիտության շրջանակներում է ամփոփված կնքադրոշմների հետևյալ շարքերը. III–109-110-112, III–121-123-122, III–101-102-107, 114, III–100, VII–866-867, իսկ աքեմենյանները՝ III–92, 94: Նա պարթևական է համարում ձիերի, որսի տեսարանների, կենդանական սյուժեներով ու հաղթանակի աստված Նիկեի պատկերով կնքադրոշմները (III–116, 120, III–152-153, IV–385-88):

Եգիպտական դրոշմակնիքների վերաբերյալ Ներովի վերլուծությունները, ըստ էության, չեն տարբերվում Ժ. Խաչատրյանի քննություններից. նա միայն անվերծանելի է համարում Էրոտ Յեզարիոնի (I–3) պատկերով դրոշմակնիքը, որի գուգահեռը, ինչպես երևում է, չի գտել հանրահայտ հավաքածուներում (էջ 116):

Միջագետքյան և սիրիական մասնաբաժիններում որոշակի բնութագրումների են արժանացել սելևկյան կնքադրոշմները (VII–573, IV–23,I-234), որոնք Անտիոքոս I-ի և Սելևկիոս II-ի դրամներին բնորոշ խորհրդանիշներով են հարդարված, թեև քիչ չեն և երկրաչափական բարդ հանգույցներով (IX–1002-1009) նկարագարդվածները: Բոսֆորյան ու սնծովյան որոշ կնքադրոշմների սյուժեների մանրամասներում (I–12, VI–15, IX–1000-1001, IV–338-339) Ներովը դիտարկում է այդ ռեգիոնի հետ Արտաշատի ունեցած բազմապիսի կապերը:

Այսպիսով, Արտաշատի ուշ անտիկ ժամանակաշրջանի ծավալուն արխիվին նվիրված ուսումնասիրությունը մեծարժեք գործ է և առաջնեկն այդ կարգի հետազոտությունների ասպարեզում: Կարծում ենք, ուսումնասիրությունն ավարտուն է նյութի ընդգրկվածության, թեմատիկ վերլուծությունների ժամանակագրական սխեմաների և աշխարհագրական սահմանների ծավալների ցուցիչի իմաստով: Սրանով, իհարկե, նյութի ուսումնասիրության սահմաններն սպառված չեն ու առաջիկայում այդ մասին կարելի է ակնկալել նոր, համարձակ մեկնություններ:

Մեր դիտողությունը վերաբերում է տեքստում նյութի գծապատկերների աղյուսակների բացակայությանը, որն անհրաժեշտ էր հատորում ոչ այնքան որակյալ լուսանկարների ցուցադրության պատճառով:

Ի վերջո, պիտի ընդունել, որ հայագիտության գանձարանը հարստացավ նս մեկ արժեքավոր ուսումնասիրությամբ և, անխոս, հայկական նեղ միջավայրից այն շրջանառություն կգտնի այդ խնդիրներով զբաղվող այլ մասնագետների շրջանում:

ԱՂԱՎՆԻ ԺԱՄԿՈՉՅԱՆ

[1] *Մ. Զ ա ր դ ա ր յ ա ն. Եզակի դրամներ Արտաշատի պեղումներից. Արտաշես Բ.– «Դրամաշրջանառությունը Հայաստանում□ հանրապետական գիտական նստաշրջանի զեկուցումների թեզիսներ, Երևան, 1998, էջ 5-7:*